ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ջրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ջրաշեն, (093)802855, jrashengp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 14

ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 6 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջով
Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Ջրաշեն համայնքի ավագանու թիվ 6 արձանագրության օրակարգը Օրակարգ 1. Ջրաշեն համայնքի 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱԳՆԵՍԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱԼԻՍԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ջրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ջրաշեն, (093)802855, jrashengp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 15

ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջով Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է՝

Սահմանել Ջրաշեն համայնքի 2020 թ-ի տեղական տուրքերի ու վճարների դրույքաչափերը հետևյալ տեսքով

1. Ջրաշեն համայնքի տարածքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **տասնհինգ հազար դրամ.**
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **քսանհինգ հազար դրամ.**
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **քսանհինգ հազար դրամ.**
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և

շինությունների համար՝ **հիսուն հազար դրամ.**

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ,**
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երկու հազար հինգ հարյուր դրամ:**

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման , վերականգնման , ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ.**

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ **երկու հազար հինգ հարյուր դրամ.**

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ **մեկ հարյուր հազար դրամ.**

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ **երեսուն հազար դրամ.**

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ **քսանհինգ հազար դրամ.**

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝
ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ.**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար երեսուն դրամ.**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար ինն հարյուր երեսուն դրամ.**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **վեց հազար երեսուն դրամ.**
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝
յոթ հազար ութ հարյուր դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝
տասնհինգ հազար դրամ.
բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝
մեկ հազար հինգ հարյուր դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար երեսուն դրամ.**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝
երեք հազար ինն հարյուր երեսուն դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **վեց հազար երեսուն դրամ.**
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝
յոթ հազար ութ հարյուր դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասնհինգ հազար դրամ.**
8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ **մեկ հարյուր յոթանասունհինգ դրամ՝** մեկ քառակուսի

մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝ **տաս հազար դրամ.**

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **երեսուն հազար դրամ.**

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ **երկու հարյուր հազար դրամ.**

դ. խաղատների համար՝ **հինգ հարյուր հազար դրամ.**

ե. շահումով խաղերի համար՝ **երկու հարյուր հիսուն հազար դրամ.**

զ. վիճակախաղերի համար՝ **յոթանասունհինգ հազար դրամ.**

10) համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երկու հազար դրամ.**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի 666օբյեկտի համար՝ **երկու հազար հինգ դրամ.**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **վեց հազար դրամ.**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **ութ հազար դրամ.**
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասնմեկ հազար հարյուր դրամ.**
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **քսան հազար դրամ.**

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երեք հարյուր դրամ.**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **մեկ հազար դրամ.**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ.**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **չորս հազար դրամ.**
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **չորս հազար հինգ հարյուր դրամ.**
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **ութ հազար դրամ.**

11) Համայնքի ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝

համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար **դրամ.**

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **մեկ հազար յոթ հարյուր հիսուն դրամ.**

գ.սոցիալական գովազդի համար՝ **զրո դրամ.**

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **յոթ հարյուր հիսուն դրամ.**

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ մեկ հարյուր ութսունյոթ դրամ հինգ լումա

զ.եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով՝ յոթանասունհինգ դրամ

12) Ջրաշեն համայնքի խորհրդանիշերը (անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ **հիսուն հազար դրամ.**

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **հինգ հազար դրամ.**

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ **երկու հարյուր հիսուն հազար դրամ:**

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար դրամ.**

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ.**

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **երեք միլիոն հինգ հարյուր հազար դրամ.**

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **հինգ միլիոն դրամ:**

16) Սույն որոշման 1-15 կետերով սահմանված դրույքաչափերը ավագանու որոշմամբ հաշվարկվել է 0.5 գործակցի կիրառմամբ, բացառությամբ՝ 7-րդ կետով սահմանված դրույքաչափերի,որը ավագանու որոշմամբ հաշվարկվել է 0.3 գործակցի կիրառմամբ :

2 . Ջրաշեն համայնքի տարածքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **մեկ հազար դրամ** .

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներնի իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդթվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **մեկ հազար դրամ.**

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **մեկ հազար դրամ .**

4) համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **մեկ հարյուր դրամ .**

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **մեկ հազար դրամ .**

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **մեկ հազար դրամ.**

7) համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանել յուրաքանչյուր ամսվա համար

ա) փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար **մեկ հարյուր քսան դրամ** :

Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար 1.500 դրամ, կամ

բ. ըստ զանգվածի մեկ տոննա աղբի համար 4. 000 դրամ իսկ համայնքում

բ) առևտրի այդ թվում՝ շուկաների, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով մեկ քառակուսի մետրի համար քսան դրամ :

գ) արտադրական , արդյունաբերական և գրասենյակային շինությունների մասով մեկ քառակուսի մետրը հինգ դրամ :

դ) կրթական, մշակութային, առողջապահական , սպորտային , գիտահետազոտական և այլ շինությունների մասով մեկ քառակուսի մետրը **երկու դրամ :**

8) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **հինգ հազար դրամ .**

9) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար **մեկ հազար դրամ** փոխհատուցման վճար.

10) Անասնաբուժական ծառայություն

Համայնքի անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայություններից օգտվելու համար սահմանել հետևյալ դրույքաչափերը՝

1. Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն – **հինգ հարյուր դրամ**
2. Ծննդօգնություն՝

2.1 թեթև միջամտություն – **մեկ հազար դրամ**

2.2 ծանր միջամտություն – հինգ հազար դրամ

3. արյուն առում կամ այլ նմուշ առում՝ մանր կենդանի- **մեկ հարյուր դրամ,** խոշոր կենդանի-**երկու հարյուր դրամ**, բացառությամբ <<Գյողատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների.
4. կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար- **երկու հարյուր դրամ.**
5. ախտահանություն-1 քմ **երկու հարյուր դրամ.**
6. միջատազերծում(դեզինսեկցիա)- 1 քմ **մեկ հարյուր դրամ.**
7. կրծողների ոչնչացում (դեռատիզացիա)-1 քմ **երկու հարյուր դրամ**
8. արհեստական սերմնավորում- **հինգ հազար դրամ.**
9. կենդանու հերձում՝ մանր կենդանի-**մեկ հազար դրամ**, խոշոր կենդանի- **երեք հազար դրամ.**
10. կենդանու բուժում՝ կախված հիվանդությունների տեսակից և կենդանու տեսակից՝ յուրաքանչյուր այցելությունը մանր կենդանի- **մեկ հազար դրամ**, խոշոր կենդանի- **երկու հազար դրամ.**
11. Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից՝ մանր կենդանի- **մեկ հազար դրամ**, խոշոր կենդանի- **երկու հազար դրամ,**
12. կենդանիների հետսպանդային զննում մանր կենդանի- **մեկ հազար դրամ,** խոշոր կենդանի – **երկու հազար դրամ:**

Կողմ - 5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱԳՆԵՍԱ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ
3. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱԼԻՍԱ
4. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՍԵԴՐԱԿ
5. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՂԱՋԱՐՅԱՆ**